

ՏՈՒՐԻԶՄԻ ՈՒ ՀԱՆԳՍՏԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության հեռանկարային զարգացման եկամտաբեր աղբյուրներից մեկը կարող է դառնալ տուրիզմի (զբոսաշրջության) և հանգստի ինդուստրիան:

Հիրավի, Արցախի եկոլոգիական առուժով մաքուր բնությունը և ռեկրեացիոն բազմազան ռեսուրսները՝ մեղմ կլիմայական պայմանները, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, զուլալ գետերն ու աղբյուրները, հանքային ջրերը, բնության անձեռակերտ հրաշալիքները և հազարավոր պատմաճարտարապետական հնագույն հուշարձանները հանգստի ու տուրիզմի ինդուստրիայի կազմակերպման լայն հնարավորություններ են ընձեռում:

Նշենք, որ Արցախի տարածքը շատ հնուց հայտնի է ոչ միայն տաք, այլև սառն հանքային ջրերով, որոնցից առավել հանրահայտը Շուշի քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող «Երկաթաջուրն» է, որի վրա առանձնահատուկ ուշադրություն է հրավիրել Մակար Բարխուդարյանը դեռ անցյալ դարում¹:

Ռեկրեացիոն ռեսուրսները ընդունված է բաժանել մի շարք տեսակների՝ առողջապահական, տուրիստական-մարզական և զանգվածային տեղական հանգստի²:

Նշված առանձնահատկությունների տեսակետից կարևոր դեր կարող են ունենալ Շուշիի շրջանը, Հաղորտի շրջանի հյուսիսային մասը՝ Տունի-Ազոխ-Դրախտիկ գոտին, Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի հանգույցն ու Թարթառ գետի միջին ավազանը:

Զանգվածային հանգստի համար շատ նպաստավոր են Թարթառ, Խաչեն, Ինջա, Կարկառ, Վարանդա, Խոնաշեն գետերի մի-

ջին ու վերին հոսանքների գեղատեսիլ, անտառածածկ ավազանները, Մարսանգի ջրամբարը, բոլոր շրջաններում առկա բարձրադիր անտառածածկ սարավանդները:

Տուրիստական-մարզական ինդուստրիայի կազմակերպման համար շատ նպաստավոր պայմաններ ունեն Ղարաբաղի լեոնաշրթայի, Մոսվի լեոնաշրթայի ու դրանց բազմաթիվ լեոնաճյուղերի բարձրադիր գագաթները (Գոմշասար, Մոսվ, Քառասուն աղջիկ, Մեծ Քիրս, Փոքր Քիրս, Դիզափայտ, Բովուրխան), լեոնազանգվածների լանջերը, որոնք տարվա զգալի մասը ձյունածածկ են լինում և հարմար են նաև դահուկային մարզածևի համար:

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Թարթառ, Կարկառ, Իշխանագետ, Վարանդա գետերի անդնդախոր կիրճերը, ջրվեժները, բազմատեսակ քարանձավային համալիրները (առավելապես Ազոխի շատ եզակի քարանձավային համալիրը, այդպիսիք կան նաև Շուշիի կիրճում, Բերդաձորում, Թարթառի հովտում):

Ինչպես զանգվածային հանգստի, այնպես էլ տուրիստական-մարզական ինդուստրիայի կազմակերպման համար լավ նախապայմաններ են Ամարասի, Գանձասարի, Դաղիվանքի, Գոչավանքի, Մայրաբերդի, Շուշիի ու ԼՂ տարածքի հատկապես նախալեռնային ու լեոնային վայրերում գտնվող հսկայական հնագույն բազմաթիվ համալիրները: Դրանք բոլորն էլ պատմագիտական, ճանաչողական մեծ հետաքրքրություն ներկայացնող մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներ են, որոնցից առանձնահատուկ ուշադրության են արժանի Ամարասի

¹ Տե՛ս Մակար Եպիս. Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 11:

² Տե՛ս Լ. Հ. Վաղեսյան, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 1988, էջ 67:

ու Գանձասարի համալիրները:

Խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի ռեկրեացիոն այդ անզուգական ռեսուրսները (մասնակի բացառությամբ Շուշիի) բնակչության հանգստի, բուժման նպատակներով պետական մակարդակով չեն օգտագործվել:

Անկախություն ձեռք բերելուց հետո, երբ Արցախի ժողովուրդը ինքն է տնօրինում իր ռեսուրսները, դրանք կարող են դառնալ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր ուղիներից մեկը: Լեռնային Ղարաբաղում առողջապահական, հանգստի ու տուրիստական, մարզական ժամանակակից համակարգի ստեղծումը ոչ միայն կոչված կլինի բավարարելու հանրապետության բնակչության պահանջները, այլև կարող է ունենալ միջազգային նշանակություն: Իսկ դա նշանակում է, որ այն կդառնա ԼՂՀ էկոնոմիկայի բաղկացուցիչ, բարձր արդյունավետ ճյուղերից մեկը:

Առողջարանային ժամանակակից համակարգի ստեղծման եզակի պայմաններ ունի Շուշին: Այն գտնվում է ծովի մակերևույթից 1450-1500 մ բարձրություն ունեցող անզուգական գեղեցիկ սարահարթի վրա՝ շրջապատված Ղարաբաղի լեռնաշղթայի բարձրադիր լեռնաճյուղերով: Լեռնային մաքուր օդը, չափավոր տաք ամառը, մեղմ ձմեռը այն նախապայմաններն են, որոնք հնարավորություն են տալիս Շուշիում ստեղծել ամբողջ տարին գործող առողջարանային համալիր: Այստեղ տարեկան միջին ջերմաստիճանը $+8,4^{\circ}$ է, ամենատաք ամիսները հուլիսն է՝ $+18,9^{\circ}$ միջին ամսական ջերմությամբ: Հունվարը ամենացուրտ ամիսն է $-1,5^{\circ}$: Կլիմայական այսպիսի պայմանները շատ հարմար են մարդու առողջության, բուժման և հանգստի համար: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Շուշին կարող է լավ ապահովված լինել փոքր-ինչ հեռու գտնվող Շուշանի աղբյուրներից բերվող բուժիչ հանքային ջրով, ապա այն հիրավի առողջարանային քաղաք կարող է դառնալ: Ավելի ճիշտ՝ այդ քաղաքի առողջարանային կարևոր դերը պետք է վերականգնվի ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխան:

Դեռ խորհրդային իշխանության տարիներին այստեղ գործում էր հանրապետական նշանակություն ունեցող առողջարան: Սակայն 1988-1992 թթ. պատերազմական

գործողությունների հետևանքով 1000 տեղանոց առողջարանի բոլոր 8 մասնաշենքերն ու բուժման, սպասարկման, օժանդակ հարմարությունները շարքից դուրս են եկել: Փաստորեն մնացել են կանգուն միայն առողջարանին կից 100 բնակարանաճյուղ բնակելի շենքի պատերը: Քանի որ Շուշին ԼՂՀ տարածքում առողջարանային առայժմ միակ կենտրոնն է, ապա առաջին հերթին, հանրապետության պահանջներից ելնելով, խիստ անհրաժեշտ է վերականգնել քաղաքի առողջարանային համակարգը, հաշվի առնելով, ինչպես ասվեց, ժամանակակից պահանջները:

Լեռնային Ղարաբաղը ունի հանգստյան տների ամբողջ տարին գործող հնարավորություններով համակարգի ստեղծման նպաստավոր պայմաններ:

Մինչև 1980-ական թվականները Լեռնային Ղարաբաղում սեզոնային ձևով (միայն ամռան ամիսներին) գործող միակ հանգստյան տունը եղել է Շուշիում, որը գուրկ է եղել տարրական հարմարություններից: Քանի որ Շուշին պետք է զարգանա առողջարանային բուժման ժամանակակից համակարգի ստեղծման ուղղությամբ, ապա այստեղ եղած ու պատերազմից խարխլված հանգստյան տունը նպատակահարմար չէ այդ նպատակի համար վերականգնել: Տեղերում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող հանգստյան տների կազմակերպման համար նպաստավոր պայմաններ կան ԼՂՀ վարչական բոլոր շրջաններում: Մասնավորապես, այդ նպատակի համար, բնական պայմանների ու տրանսպորտային առանձնահատկություններից ելնելով, նախընտրելի են Մարտունու շրջանի Թաղավաղը, Ասկերանի շրջանի Բաղարա, Մարտակերտի շրջանի Քոլատակ և Թալիչ, Հաղորթի շրջանի Դրախտիկ գյուղերի հանգույցները: Դրանք բոլորն էլ ունեն գեղատեսիլ շրջապատ, պտղառատ անտառներ, մեղմ կլիմա, զուլալ գետեր, աղբյուրներ:

Ինչպես նշել ենք, Լեռնային Ղարաբաղը բազմակողմանի նախապայմաններ ունի նաև միջազգային տուրիզմի զարգացման համար: Իր անզուգական դիրքի, տուրիստական մեծ հետաքրքրություն ներկայացնող բնական և պատմա-ճարտարապետական նախապայմաններից ելնելով, ԼՂՀ տուրիզմի հիմնական բազա կարող է հան-

դիսանալ Շուշի քաղաքը: Այստեղ ժամանակին եղել է այդ նպատակի համար կառուցված երկու մասնաշենք՝ 300 տեղով: Սակայն դրանք պետք է վերակառուցվեն ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխան, այսինքն ստեղծվի 500 տեղանոց միանգամայն նոր բազա՝ իր բոլոր հարմարություններով: Շուշիի միջազգային տուրիզմի այս բազան կունենա իր մասնաճյուղերը Սարսանգի ջրամբարի ափին կամ Վանք գյուղում (որտեղ հանրահայտ Գանձասարի վանքն է), Մարտակերտի ու Շահումյանի շրջանների, ինչպես նաև Քարվաճառի տարածաշրջանի երթուղիները սպասարկելու համար, Թաղավարդ գյուղում (որը հանրահայտ է իր գեղատեսիլ անտառներով և մոտակա Մխտորաշեն գյուղի 2000 տարեկան մեծ հետաքրքրություն ներկայացնող Մոսի ծառով, զուլալ աղբյուրով), Մարտունու և Հաղուրթի շրջանների երթուղիները սպասարկելու համար: Ջրոսաշրջիկների համար առանձնահատուկ մեծ հետաքրքրություն է առաջացնում ոչ միայն նախկին ԽՍՀՄ տարածքում եղած ամենատարեց այս ծառը իր շքեղ տեսքով ու կայծակի հարվածից առաջացած հսկա փչակով, որտեղ տեղավորվում է 100 մարդ, այլև այն, որ այս ծառի շվաքի տակ հանգստացել է Գրիգոր Լուսավորիչը, Հայոց արևելյան կողմանց առաջին եպիսկոպոս Գրիգորիսը, Մ. Մաշտոցը, Վաչագան Բարեպաշտ թագավորը, Մովսես Կաղանկատվացին, Մխիթար Գոշը,

Կիրակոս Գանձակեցին, Րաֆֆին, Ավետիք Իսահակյանը³: Իսկ Շուշիի, Ասկերանի ու Բերձորի շրջանները կսպասարկվեն անմիջապես Շուշիի բազայից:

Քան որ Հայաստանի Հանրապետությունը նույնպես մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջազգային տուրիզմի զարգացման տեսակետից, որտեղ այս բնագավառում մինչև 1980-ական թվականների վերջերը զգալի նվաճումներ են ձեռք բերվել, ստեղծվել էր տուրիզմի ինդուստրիայի բազա, պատրաստվել կադրեր, որտեղ արդեն նորից վերակենդանանում է այս շատ կարևոր ճյուղը, ապա Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տուրիզմը կարող է զարգանալ միայն Հայաստանի Հանրապետության տուրիզմի հետ սերտ ինտեգրացված: Այսինքն ԼՂՀ տուրիստական ուղիների ցանցը պետք է հանդիսանա ՀՀ համապատասխան ցանցի բաղկացուցիչ մասը: Դրանք պետք է իրար հետ կապվեն Տաթև-Գորիս-Բերդաձոր-(Լաչին)-Շուշի և Սևան-Մոռք-Տաքջուր-(Իստիսու)-Գանձասար երթուղիներով:

Այսպիսով «տուրիզմի ու հանգստի» ինդուստրիան ԼՂՀ տնտեսության հեռանկարային այն հիմնական ուղիներից մեկն է, որն ունի զարգացման հիմնավոր, լայն հնարավորություններ և որը այդ լեոնաշխարհի էկոլոգիական վիճակի վրա բացասական ազդեցություն չի թողնի:

Ա Վ ԳՐԻԳՈՐՅԱՆ

³ Տե՛ս Մ. Ա. Մելքունյան, Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն, Երևան, 1997, էջ 232-233: